ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Չկալով համայնք,
Հեռ **098758066**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Չկալով համայնքի ավագանու թիվ 28-31 որոշումները:

Առդիր՝ 22 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
ՀՀ, Լոռու մարզ, գ.Չկալով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբեր 2016թվականի N 28

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 Թ-ԻԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19 –Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով

Չկալով համայնքի ավագանին որոշում է

ՕՐԱԿԱՐԳ

1.Չկալով համայնքի ղեկավարին կից ղորհուրդ ստեղծելու մասին:

2.Չկալով համայնքի 2017-2021 ԹԹ հնգամյա ծրագիրը հաստատելու մասին:

3.Սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝(5)	Դեմ՝(0)	Ձեռնպահ՝(0)
Հասմիկ Քոչինյան			
Հրաչյա Հակոբյան			
Համլետ Մխիթարյան			
Վարդան Մխիթարյան			
Վահագն Շաքարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Շաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Չկալով համայնք, գ. Չկալով
հեռ. 098758066

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » դեկտեմբերի 2016 թվականի N29 -Ա

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Չկալով համայնքի ավագանին որոշում է.

1. Ստեղծել Չկալով համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Անի Ավետիքյան աշխատակազմի քարտուղար, խորհրդի նախագահ,
2. Ռուզաննա Էվոյան աշխատակազմի համայնքային ծառայող, խորհրդի քարտուղար
3. Հրաչյա Հակոբյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
4. Հասմիկ Քոչինյան ավագանու անդամ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
5. Հրաչյա Հակոբյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
6. Հովհաննես Մելիքյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
7. Արտավազդ Հակոբյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
8. Սասուն Գրիգորյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
9. Վարդգես Հակոբյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)
10. Մանուշակ Քոչարյան համայնքի բնակիչ, խորհրդի անդամ (համաձայնությամբ)

2.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 15_-ի «Չկալով համայնքի ղեկավարին կից խորհուրդ ստեղծելու մասին » N25Ա որոշումը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝ (5)	Դեմ՝ (0)	Ձեռնպահ՝ (0)
Հասմիկ Քոչինյան			
Հրաչյա Հակոբյան			
Համլետ Մխիթարյան			
Վարդան Մխիթարյան			
Վահագն Շաքարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Չկալով համայնք,

Հեռ **098758066**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » դեկտեմբեր 2016 թվականի N 31

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 9-ի « Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Չկալով համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 30-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Չկալով համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի ներքոհիշյալ բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝

1.) Սուրեն Սմբատի Մելիքյան 35000 հազար դրամ,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

2.) Ալվարդ Վասիլի Հակոբյան 35000հազար դրամ,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

3.) Սասուն Մացակի գրիգորյան 30000հազար դրամ:
(Անուն, ազգանուն,հայրանուն)

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ՝ (5)	Դեմ՝ (0)	Ձեռնպահ՝ (0)
Հասմիկ Քոչինյան			
Հրաչյա Հակոբյան			
Համլետ Մխիթարյան			
Վահագն Շաքարյան			
Համլետ Մխիթարյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Չկալով համայնք, հասցե գ.Չկալով

հեռ. 098758066

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2016 թվականի N 30 -Ն

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է.

Չկալով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Չկալով համայնքի 2017-2021 թթ հնգամյա զարգացման ծրագիրը

2.Ուժը կորցրած ճանաչել Չկալով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 22-ի 8-ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

ավագանու անդամներ՝ կողմ՝(5) դեմ՝(0) ձեռ՝(0)

Հասմիկ Քոչինյան
Հրաչյա Հակոբյան
Համլետ Մխիթարյան
Վարդան Մխիթարյան
Վահագն Շաքարյան

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Շաքարյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ Ռ.Շաքարյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի

նիստի N30-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն 4

2. Համառոտ տեղեկատվություն .....

Պատմական ակնարկ 5

3. Չկալով համայնքի տեսլականը .....

4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն .....

5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն .....

6. Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն .....

7. Ռազմավարության սահմանում .....

1.Ներածություն

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքապետի և նրա աշխատակազմի կողմից քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից, դրվում է գործողության մեջ: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցությոան համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական , ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների (բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են նաև ֆինանսական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները:

2.Պատմական ակնարկ

Չկալով համայնքը հիմնադրվել է 1140 թվականին հիմնադրել է գուգարաց Սադուն իշխանը ամրությունների նպատակով:Չկալով համայնքը գտնվումէ ՀՀ Լոռու մարզի նախկին Թումանյանի շրջանի վարչական տարածքում,Երևան – Վանաձոր – Թբիլիսի մայրուղուց հեռավորությունը 8 կմ է,Երևանից 145 կմ,Ալավերդուց 30կմ:Գյուղը գտնվում է Վանաձոր – Ալավերդի մայրուղու միջնամասում:Հեռավորությունը Վանաձորից և Ալավերդեւց 30 ական,Երևանից ՝ 150,Գյումրուց՝ 90,Թբիլիսիից 130,միջպետական նշանակության Երևան Թբիլիսի մայրուղու Վանաձոր Ալավերդի հատվածից 8,Երևան Թբիլիսի երկաթուղու <<Թումանյան>>կայարանից 10 կմ:Համայնքի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 1450մ բարձրության վրա,որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության :Գյուղատնտեսության համար ռիսկային գոտի է,հողերը չեն ոռոգվում,տարվա ընթացքում տեղումները անհամաչափ են:Գյուղատնտեսության համար ռիսկսյին գոտի ,հողերը չեն ոռոգվում ,տարվա ընթացքում տողումները անհամաչափ են:Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում կարկտահարումները,ցրտահարումները,երաշտները:Ըստ օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների ՝առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18,-28,մայիսին՝ +32,-3,հոկտեմբերին +31-10;Չկալով համայնքում ներկայումս գործում է հիմնական դպրոց ,բուժկետ հեռուստակայան:

3. Չկալով համայնքի տեսլականը

Չկալով համայնքը առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օգտագործելով սեփական ռեսուրսները և արտերկրում գտնվող համագյուղացիների կարողությունները: :

Գտնվելով այս դժվարին ժամանակահատվածում անհրաժեշտ ենք համարում ներդնելով բոլոր կարողությունները այս հինգ տարիների ընթացքում կատարել բարեփոխումներ և մեր սերունդների համար ստեղծել ավելի բարեկարգ պայմաններ:

4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

4.1. Իրավիճակն ըստ ոլորտների

4.1.1. Ժողովրդագրություն և միգրացիա

Համայնքը կազմված է 73 տնային տնտեսություններից, որից առկա է 63-ը: Մշտական բնակչությունը (01.01.16 դրությամբ) կազմում է 247 մարդ: Առկա բնակչության թիվը կազմում է 247, որից 130-ը տղամարդ, 117-ը՝ կին:

Չկալով համայնքի առկա բնակչությունը ըստ տարիքային խմբերի և սեռի[1]

		Ընդամենը	Այդ թվում, կանայք
1.	Մինչև 1 տարեկան	1	-
2.	1-2 տարեկան	3	1
3.	3-4 տարեկան	4	2
4.	5-6 տարեկան	4	3
5.	7-10 տարեկան	8	3
6.	11-14 տարեկան	10	6
7.	15-17 տարեկան	9	3
8.	18-22 տարեկան	5	4
9.	23-45 տարեկան	54	25
10.	46-62 տարեկան	34	14
11.	63 և ավելի տարեկան	115	54
	Ընդամենը	247	117

2016 թ-ին համայնքից մշտական բնակության նպատակով մեկնողներ՝ 3, միևնույն ժամանակ համայնք են տեղափոխվել՝ 8 մարդ, արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը 3 մարդ:

4.1.2. Զբաղվածություն

Համայնքի զբաղված բնակչության թվաքանակը մոտ 127 է, որից 75-ը ընդգրկված է գյուղատնտեսական գործունեության մեջ (ինքնազբաղվածություն և վարձու աշխատանք): Ոչ գյուղատնտեսական ոլորտում ընդգրկված է 28 մարդ: Մասնավորապես, պետական մարմիններում ընդգրկված է 28 մարդ, համայնքի աշխատակազմում զբաղված է 5 աշխատող

(2 համայնքային ծառայող՝), 2 հայեցողական: Չկալով համայնքը ունի հիմնական դպրոց, որտեղ սովորում են 14 աշակերտ, աշխատողների թիվը կազմում է 22 մարդ, հիմնականում համալրված է բարձրագույն կրթությամբ մանկավարժներով: Համայնքը չունի մանկապարտեզ:Համայնքում գործում է բուժկետ՝ Դսեղ համայնքի առողջապահության կենտրոնի մասնաճյուղը ,որտեղ աշխատում է 1 բուժքույր:

:

4.1.3 Հողօգտագործում և գյուղատնտեսություն

Չկալով համայնքի վարչական տարածքը կազմում է 412.1 հա, որից 352 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը:

Վարելահողերը կազմում են 0.64հա, որից սեփականաշնորհված 0.64 հա-ը պատկանում են համայնքի բնակիչներին, իսկ 228.6հա-ը համայնքային նշանակության են, որից 56հա ամբողջությամբ տրված են վարձակալության:, համայնքի խոտհարքները կազմում են 1042,92հա որից 628հա պատկանում է բնակչությանը:

Գյուղատնտեսական այլ հողատեսքերը կազմում են 288,08 հա, որոնցից 246,48 հա-ը՝ վարձակալությամբ տրված համայնքային սեփականության հողեր են, իսկ 41,50 հա-ը՝ օգտագործման և վարձակալության իրավունքով տրված պետական հողեր, շուրջ 355հա վարելահողեր ականապատված են և գտնվում է հակառակորդի նշանառության տակ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում են հողագործությամբ, մշակվող հողատարածքներից ցածր բերք է ստացվում, որի պատճառը հիմնականում ոռոգման ջրի բացակայությունն է, կարկտահարությունը, երաշտը:

Չկալով համայնքի հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության և սեփականության սուբյեկտների

	Հողերի նպատակային նշանակությունը	Ընդամենը, հա	ՀՀ քաղաքացիների հա	Իրավաբանական անձանց	Համայնքային, հա	Պետական, հա
1.	Գյուղատնտեսական	352	-	-	-	-
2.	Բնակավայրերի	38.8				-
3.	Արդյունաբերական և ընդերքօգտագործման	2.9	-	-	-	-
4.	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ	3.2	-	-	-	-
5.	Հատուկ պահպանվող տարածքներ	-	-	-	-	-
6.	Հատուկ նշանակության	-	-	-	-	-

7.	Անտառային	5.8	-	-	-	
8.	Ջրային	5.8	-	-		
9.	Պահուստային	-	-	-	-	-
10.	Ընդամենը					

Հողային ռեսուրսներ: Մեկ ընտանիքին բաժին ընկնող վարելահողերի տարածքը կազմում է ընդամենը 1,02 հա: Գյուղատնտեսության արտադրության կազմակերպմանը լրջորեն խոչընդոտում են բնակլիմայական պայմանները: Համայնքի բնակիչներին պատկանող հողերից բնակելի հողատեսքերը կազմում են 38.8 հա:

Չկալով համայնքում

Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը

Հ/հ	Գյուղ մեքենաներ և գործիքներ	Քանակը		
		համայնքային սեփականության	մասնավոր սեփականության	կոոպերատիվ
1.	Հացահատիկային կոմբայն		-	
2.	Տրակտոր		2	
3.	Այլ գյուղ մեքենաներ, գործիքներ		1	

Անասնապահություն: Չկալով համայնքում առկա է 315 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից՝ 117գլուխ կով, մանր եղջերավոր անասուններ՝ 198գլուխ, խոզեր՝ 45գլուխ, մեղվափեթակ՝ 38հատ, թռչուն՝ 117հատ: Համայնքում արտադրվում է գյուղատնտեսական մթերքներ՝ կաթ, միս, բուրդ, ձու, մեղր:

Անհրաժեշտ է ստեղծել կաթի, մսի մթերման կետեր, որը հնարավորություն կտա զարգացնել անասնապահությունը:

Համայնքի սեփականությունը և բյուջեն

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից, գույքի վարձակալության եկամուտներից և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից, նպատակային հատկացումներից (սուբվենցիաներ):

Չկալով համայնքի 2016թ.-ի բյուջեի փաստացի եկամուտները

	Եկամտատեսակներ	Ընդամենը	Վարչական բյուջե (հազ.դրամ)	Ֆոնդային բյուջե (հազ.դրամ)
	Տարեսկզբի մնացորդ			
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)	6417.5	6417.5	0.0
	Որից սեփական եկամուտներ			
1.	**ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**, այդ թվում	2438.6	2438.6	x
1.1	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	2243.5	2243.5	x
1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների	5.8	5.8	x
1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	117.3	117.3	x
1.4	Տեղական տուրքեր	12.0	12.0	x
2.	**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**, այդ թվում	3500.0	3500.0	
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ)	3500.0	3500.0	x
2.2	Պետական բյուջեից համայնքի վարչ. բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0	0	x
2.3	Այլ դոտացիաներ			0.0
3.	**ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**. այդ թվում	0	0	x
3.1	Գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	478.9	478.9	x
3.2	Տեղական վճարներ	0	0	x
3.3	Այլ եկամուտներ			x

Չկալով համայնքի 2017թ.ի պլանավորված բյուջեի եկամուտները

(հազ.դրամ)

Տարեսկզբի մնացորդ	Եկամտատեսակներ	Ընդունված բյուջե	Վարչական մաս	Ֆոնդային մաս
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)[2]	6417.5	6417.5	0.0
	Որից սեփական եկամուտներ	2249.3	2249.3	0. 0

1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	2438.6	2438.6	x
1.1	Հողի հարկ	2243.5	2243.5	x
1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	5.8	5.8	x
1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	177.3	177.3	x
14	Տեղական տուրքեր	8.0	8.0	x
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ			0.0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	3500.0	3500.0	x
2.2	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ	-	-	x
3.1	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	478.9	478.9	x

Աղյուսակ 7

Չկալով համայնքի 2016թ.-ի պլանային բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման.

	Բյուջետային ծախսերի անվանումները	ընդամենը (հազ.դրամ)	Այդ թվում (հազ.դրամ)	
			Վարչական բյուջե 45.278,5	Ֆոնդային բյուջե 31.145,6
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	0		14.
1	Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ, այդ թվում	0	0.0	0.0
1.1	Կառավարում	0	0.0	0.0
1.2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0.0	0.0	0.0
2.	Տնտեսական հարաբերություններ	0.0		0.0
2.1	Գյուղատնտեսություն	0.0	0.0	0.0
2.2	Ճանապարհային տրանսպորտ	0.0	0.0	0.0
3.	Շրջակա միջավայրի պահպանություն, աղբահանություն	0.0	0.0	0.0

4.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	0.0	0,0	0.0
4.1	Ջրամատակարարում	0.0	0,0	0.0
4.2	Փողոցների լուսավորում	0.0	0.0	0.0
5.	Մշակութային ծառայություններ	0.0	0.0	0.0
6.	Նախադպրոցական կրթություն	0.0	0.0	0.0
7.	Սոցիալական արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	0	0,0	
8.	Պահուստային ֆոնդ	0	0.0	0.0

2016թ. բյուջետային ընդհանուր ծախսերը պլանավորվել են 6417.5հազ.դրամ:

4.1.15. Համայնքում իրականացվ(ող)ած ծրագրեր

Վերջին տարիներին համայնքում իրականացվ(ող)ած ծրագրեր

	Ծրագրեր	Իրականացնող կազմակերպությունը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Համայնքի ներդրում	Իրականացման տարեթիվը
1.	Համայնքում 22.7կմ խմելու ջրագծի անցկացում	<<Վիվա սել ընկերության >> ծրագրի կողմից	35.000000	3000000	2015թ
2.	Գյուղամիջյան հրապարակի վերանորոգում, սելավատարների վերանորոգում, գերեզմանների ճանապարհի կառուցում և խճապատում		3.0000000	-	2017թ
3.	<<Հայաստանում երիտասարդների ներգրավվածության խթանման >> ծրագիր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից	2.000000	-	2017թ

4.2. Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծություն (ուժեղ և թույլ կողմեր)

Ներքին	
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
• Անտառին մոտ լինելը • Անասնապահության զարգացմն նպաստավոր պայմանների առկայություն • Խմելու ջրի ապահովվածություն	աշխատատեղի բացակայություն • ոռոգման ջրի բացակայություն • Գյուղից մարզկենտրոն աշխատող մարդատար տրանսպորտի վիճակը • Սարամասեր տանող ճանապարհի ոչ բարվոք վիճակը

ՈՒԹՀՍ (SWOT) վերլուծություն (հնարավորություններ և վտանգներ)

Արտաքին	
Հնարավորություններ	**Վտանգներ**
• Գյուղատնտեսական բերքի մթերման և վերամշակման զարգացում • Կաթի, մսի մթերման կետի ստեղծում	

5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն

Համայնքի հիմնահարցերը

- Դպրոցի վերանորոգում , ջեռուցման ցանցի անցկացում
- Մշակույթի տան կառուցում
- Փողոցային լուսավորության ցանցի վերականգնում և ընդլայնում

Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն

Հիմնահարցերի պատճառահետևանքային վերլուծություն և քարտեզագրում ըստ պատկանելության **Աղյուսակ**

Հիմնահարց	Պատճառ	Հետևանք	Այլընտրանքային լուծումներ	Պատկան մարմին/ դոնոր կազմակերպություն
Դպրոցի վերանորոգում, ջեռուցման ցանցի անցկացում	• Ֆինանսների բացակայություն	• Կրթական մակարդակը կբարձրացվի,	• Անհրաժեշտ է պետական աջակցություն	• ՀՀ Կառավարություն Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ • Բարերարներ
Մշակույթի տան կառուցում	Ֆինանսների բացակայություն	• Կխաթարվի մշակույթային կյանքը	• Անհրաժեշտ է պետական աջակցություն	• ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ

7. Ռազմավարության սահմանում

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակույթային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ և գրավիչ բնակավայր, զարգացնել գյուղատնտեսության ավանդական ճյուղերը /անասնապահություն, բուսաբուծություն/: Համայնքում պայմաններ ստեղծել անասնապահական արտադրանքի իրացման դժվարությունները հաղթահարելու համար:

Հավելված 1. Մեթոդաբանություն

1. Ծրագրի մշակման քայլերը և սկզբունքները

ՀԶԾ-ն մշակվում է համայնքի բնակչության կողմից: ՀԶԾ-ի մշակման գործընթացին բնակիչների մասնակցությունն ապահովվում է համայնքային ընդհանուր ժողովների քննարկումների միջոցով:

ՀԶԾ-ի մշակման գործընթացն իրականացվում է հետևյալ քայլերով

1. Նախապատրաստական աշխատանքներ,
2. Համայնքի տեսլականի ձևակերպում,
3. Սոցիալ- տնտեսական իրավիճակի վերլուծություն,
4. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն,
5. Նպատակների սահմանում,
6. Միջնաժամկետ ծրագրեր,
7. Ծրագրերի մշակում

1.1. ՀԶԾ-ի մշակման հիմնական սկզբունքները.

- **Մասնակցային.** Գործընթացին մասնակցում է համայնքի բնակչությունը և բնակչության ներկայացուցիչների խմբերը, որոնք կամավորության սկզբունքով ձևավորվում են համայնքի ընդհանուր ժողովի կողմից; Աշխատանքային այս ձևաչափը ապահովում է գործընթացի թափանցիկությունը և հաշվետվականությունը: Համայնքի բնակչությունից բացի մասնակցում են նաև համայնքից դուրս գտնվող շահագրգիռ կողմերը՝ մարզպետարան, կառավարություն միջազգային և դոնոր կազմակերպություններ, հասարակական միավորումներ, գործարարներ և այլն:
- **Համատեղելի՝** Հաշվի են առնվում հանրապետական, մարզային և հարևան համայնքների շահերը;
- **Փոխլրացնող՝** Հաշվի են առնվում հարևան համայնքների առկա հնարավորությունները:
- **Համաձայնողական՝** Տարակարծությունները հարգվում են և որոշումները կայացվում են փոխզիջումային սկզբունքով:
- **Հետադարձ կապի՝** Քայլերն ունենալով որոշակի հաջորդականություն՝ պարբերաշրջանային են:
- **Ճկուն՝** Իրավիճակի ցանկացած փոփոխություն հնարավոր է ներառել:
- **Շարունակական՝** Ծրագրի մշակման և ընդունման մասնակցային մեխանիզմները (հաստատվում են ավագանու և համայնքի ընդհանուր ժողովի կողմից) ապահովում են ծրագրի շարունակությունը:

2. Նախապատրաստական աշխատանքներ

ՀԶԾ-ի մշակման գործընթացը ներառում է հանրային կառավարման երկու մակարդակում (պետական՝ տարածքային և տեղական) պաշտոնական բանակցային հանդիպումներ: Համակարգված աշխատելու և կրկնություններից խուսափելու համար, ճանաչողական

հանդիպումների ընթացքում համաձայնություններ են ձեռք բերվում մարզային պատասխանատուների (մարզպետ, մարզպետի տեղակալ, ոլորտային վարչության ղեկավարներ և այլն) և համայնքի ղեկավարության (համայնքապետ, քաղաքապետ, ավագանու անդամներ), ինչպես նաև համայնքում գործունեություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների, անհատ բարերարների հետ:
ՀԶԾ-ի մշակման գործընթացի մասնակցայնությունն ապահովվում է համայնքային ընդհանուր ժողովներում:

Համայնքի ընդհանուր ժողով:

Նպատակը՝ ՀՀԶԾ -ի մշակման ընթացքում հրավիրվում է համայնքի երկու ընդհանուր ժողով, որոնցից առաջինը հետապնդում է իրազեկման, մոբիլիզացիայի և ֆոկուս խմբերի ձևավորման, իսկ երկրորդը՝ ՀՀԶԾ-ի նախագծի քննարկման և հաստատման նպատակ:

3.Համայնքի տեսլականի ձևակերպում

Համայնքի տեսլականը գյուղի/քաղաքի ապագայի այն ցանկալի պատկերն է, որին հավաքականորեն ձգտում են համայնքի բոլոր անդամները:

4.Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը վերլուծվում է տվյալների ուսումնասիրության աշխատանքային քննարկումների մեթոդով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2015թվականի դեկտեմբերի 6-ին Լոռու մարզի Չկալով համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունում, ընտրության արդյունքում համայնքապետ վերընտրվեց համայնքի ղեկավար Ռոման Ռոբերտի Շաքարյանը և 2015 թվականի սեպտեմբերի 13-ին ավագանու հինգ անդամներ՝

1. Հասմիկ Բորիկի Քոչինյան
2. Հրաչյա Հովիկի Հակոբյան
3. Վարդան Սամվելի Մխիթարյան
4. Վահագն Գառնիկի Շաքարյան
5. Համլետ Ղարիբի Մխիթարյան

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 5հոգի:

ՉԿԱԼՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ